

տաճարներն աղատել հեթանոսական զոհադորձութենէ՛ :

Լյոյրլայի դասակարգութենէն երբէք վար չը մնար Յոյն կղերն Աստուծոյ փառքն տարածելու և արքայութիւնն յառաջայնելու համար : Այն Միաբանութիւնն , որ անամօթաբար Հայոց սեղանն Ձոհարան կ'անուանէ , այնպիսի լիտի գործքեր կը գործէ Աստուծոյ տաճարներուն մէջ , այնպիսի ցոխ արարմունքներ ունի , որ բնաւ երբէք չը կարծուիր որ հեթանոս քուրմերն ներէին իրենց այդ լիտութիւններն . . . : Մեր պարկեշտութիւնն չը ներէր մինչև անգամ անպատուակ խօսիլ նոցա լպիրշ գործոց վերայ , բայց իրենք կը գործեն առանց երբէք կարմրելու և ամաչելու :

Աշխարհս այսպէս է . մինչդեռ քրիստոնէութիւնն խոսառ խոյս տուած է Յոյն Միաբանութեան կեանքէն , ընթացքէն , սրտէն և հոգիէն , ընդհակառակն՝ կը հրատարակեն 'ի լուր աշխարհի , որ Հայք հեթանոսական զոհարան ունին և ս'չքրիստոնէական պատարագի սեղան : Միթէ այս չէ՞ և Լոյրլայի Ընկերութեան ընթացքն — 'ի ներքուստ հեթանոսական գործերէն աւելի վատ գործեր գործել և արտաբուստ զայլս իբրեւ անհաւատ և հեթանոս մրտաւ :

ՄԻՅՆ շատ անգամ յունական չարակամութեան արարքներն նշաւական է 'ի զգուշութիւն մեր միամիտ Ազգայնոց , բայց դժբաղդաբար մերթ ընդ մերթ կը անսնուի որ մերայինք արտաքին ցոյցերէն երբեմն այնքան կը յափշտակին , որ գոգցես կը մոռանան ամենայն ինչ և ինքնապարձ օրթոդոքսութեան միարարաց թմբկահարութեանն արձագանգ կը տան : Մեր կը կրկնեմք ասան , որ արթուն և զգոյշ մնալու է ամեն ժամանակ եւ օրթո

դոքսութիւնն ( որ թէ հեթանոս կը հռչակէ զմեզ եւ թէ կը շոյէ՝ միութեան ինդիրն յեղյեղելով ) միշտ և հանապաղ համարելու է մեր Ազգայնութեան համար այն աներանելի անդունդն , ուր գլորուողն պիտի մնայ անյարիր և այլ եւս Հայութեան լոյս պիտի չը տեսնէ :



Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ի Ա Կ Ա Ն Բ

Յունաց ներկայ Պատրիարքի գաւառներն 'ի վեր որչափ որ առ երեսս Յունաց Միաբանութեան և տեղական յունագաւան ժողովրդոց մէջ խաղաղութիւն կը նշմարուէր , բայց պաշտօնական և հանդիսաւոր կերպիւ երկուստէք հաշտութեան և խաղաղութեան սոյմաններն վաւերացած և ընդունուած չը լինելով՝ մերթ ընդ մերթ տժգոհութեան ցոյցեր կ'երեւէին ժողովրդեան կողմէն : Ներկայ ամսոյս մէջ Յունաց Պատրիարքն հանդիսաւոր պատարագ մատուցանելն զկնի , ուր միայն ներկայ էր քաղաքացի ժողովուրդն և ս'չ եկաւորք կամ ուխտաւորք , Միաբանութեան կողմէն կարգացուեցան հաշտութեան համար պատրաստուած սոյմաններն , որոնք յերիւրուած էին այնպիսի հնարագէտ ճարտարամտութեամբ , որ պարզամիտ ժողովուրդն խորն չը թափանցելով ընդունած էր գոհութեամբ և յետ աւարտման հանդիսին՝ ուղղակի 'ի Պատրիարքարան դիմած էր նախաձաչիկով եւ ըմպելօք հաշտութեան սոյմաններն կնքելու :

Սոյն հանդիսի երկրորդ օրն , որ կիրակի էր , քաղաքացի ժողովուրդն եկեղեցին երթալով իւր քահանայական գան և ս տարած էր իւր հետ , որպէս

զի, երբ մի դասէն Յունաց Միաբանութիւնն յունարէն երգէ, միւս դասէն քաղաքացի կղերն Արաբերէն երգէ : Այսպէս և սահմողւած էր ժողովուրդն թէ ինքն այսուհետև Պատրիարքի ընտրութեան մէջ քուէ տալու իրաւունք պիտի ունենայ եւ պիտի կարողանայ իւր տեղական եկեղեցական դասէն առաջնորդ եւս ունենալ, որպէս զի ամեն ժամանակ չքստիպուի Պատրիարքին և կամ Երուսաղէմի Մինօղին զի մեղ : Սակայն շուտով տեսաւ որ խաբւած է . վասն զի երբ քաղաքացի կղերն սկսաւ Միաբանութեան հաւասար իրաւունքով մի դասն գրաւել և արաբերէն երգել, աղմուկն բարձրացաւ եւ Միաբանութիւնն տեսնելով թէ պիտի չը կարենայ ահազին բաղմութիւնն եկեղեցիէն հանել, ինքն ելու եկեղեցիէն և հետեւեալ օրերուն մէջ իսպառ արգիլեց ժողովրդեան սոյն կարծեցեալ ձեռներեցութիւնն և այսպէս խախտեցաւ նենդութեան աւազոյ վերայ հաստատեալ խաղաղութիւնըն : Ինչպէս կ'երեւի տեւական խաղաղութիւնն գժուարաւ պիտի հաստատուի Միաբանութեան և տեղական ժողովրդեան մէջ . վասն զի ժողովուրդն թեւ և թիկունք ունի իրեն ( թէ և ոչ յայտնապէս ) Ռուսիոյ Հիւպատոսարանն, որ ամենայն ճշգրութեամբ կը կատարէ իւր Տէրութեան հրահանգներն, այսինքն ոչ թէ պաշտօնապէս կը միջամտէ, այլ իբրև հաշտարար կը ձեւանայ երկոցունց կողմանց, և այն դումարն, որ Ռուսաստանն էն ամեն տարի յունական Միաբանութեան կը գար և Բուլղարական խնդրոյն առ թիւ ընդհատած էր, նոյն դումարն այժմ մասն առ մասն կ'ըստանայ Հիւպատոսարանն եւ ոչ թէ Միաբանութեան կը յանձնէ, այլ տեղական յունագաւան ժողովրդոց կը

բաժնէ իբրև աղքատաց, միշտ յայտնելով որ Տէրութիւնն կարող չէ անկարեկից լինիլ օրթողոքս Արաբներուն : Այնպէս որ այժմ տեղական ժողովուրդըն իրեն դաւանակից բարերար կը ճանաչէ առաւել Ռուսիոյ Կառավարութիւնն քան թէ Յունաց Միաբանութիւնն : Իսկ Ռուսիոյ Տէրութիւնն, տեսնելով թէ Յունաց Միաբանութեան հետ հաշմանթացութիւնն գրեթէ անհնարին է, տեղական ժողովրդեան միջոցաւ կ'ուզէ տիրական միջամտութիւն ունենալ : Ս. Տեղեաց մէջ, ուր տակաւին պատուաւոր և դաւանակից հիւր միայն կը համարուի Յունաց Միաբանութեան կողմէն և այն յաւէտ Ռուս Ուխտաւորաց մեծամեծ նուիրանաց և գրամական զոհողութեանց պատճառաւ :

—Յոյն կղերն գողցես ուխտած է ամիս մը չանցնել առանց իրաւունք բռնաբարելու և խռովութիւն յարուցանելու Բեթլէհէ միջեկեղեցւոյն մէջ : Այս մասին Ս. Աթոռոյս Վարչութիւնն գրեթէ շարունակ տագնապի մէջ է : Մերթ հեռագիր կը հասնի Բեթլէհէ միջեկէն թէ ահա Յոյնք մեր բուրվառն կախած տեղէն վերուցին : Մերթ նամակ կը հասնի թէ այսօր Յոյնք իրենց սահմանեալ ժամանակն չը հասած իրենց ժամերգութիւնն սկսան մեր ժամերգութեան վերայ : Մերթ հեռագիր կը հասնի թէ ահա Յոյնք արգելք եղան՝ կամ մեր մկրտութեան, կամ մեր հարսանեաց, կամ մեր թաղման, կամ մեր նշանաւոր Տօնախմբութեանց ժամանակ սիւնաղարդ գաւթէն հանդիսիւ անցնելու, մեր Եկեղեցւոյ ծիսական հնաւանդ սովորութեան համեմատ : Առ քեզ տագնապ, առ քեզ շիթութիւն, մկրտեալն, կամ նորապսակքն, կամ ննջեցեալն ժամերով յեկեղեցին պիտի սպասեն, մինչև Ե

բուստդէմէն հրաման առնուի և զըրկուի, որ ելնեն : Մերթ լուր կը հասնի թէ ահա մեր պատկերն անհետացուցին, մեր աշտանակն վերուցին, մեր աւելն արգիլեցին, և այլն և այլն :

Յոյն կղերին սոյն խռովասէր և անտիրիստոնէական վարմունքն և Տէրութեան տեղական (Բեթլէհէմի) սլաշտոնէից մերթ թոյլ, մերթ կողմնասեր և մերթ բռնաւորական ընթացքն անընդհատ կը տառապեցնեն և կը տատամեցնեն Ս. Աթուոյս Վարչութիւնն :

Ահա այս անգամ, Ս. Մննդեան հանդէսներուն մտաւորութիւն պատճառաւ, մինչդեռ կը պատրաստուէինք Ս. Մննդեան եկեղեցւոյ մեր սեպհական մասն աւելլել, յանկարծ գիր եկաւ Վսեմ. Բղէշիէն մեր այս ինչ և այն ինչ տեղերն չաւելլել, յայտնելով թէ քրննութեան տակ է, որոց համար Յունաց ևս գրուած է չ'աւելլել, իսկ սր աղգըն որ աւելլէ, պատասխանատուութիւն թակից պիտի մնայ : — Սոյն ազդարարութեան դէմ իսկոյն բողոքեցինք մեք, յայտնելով որ Յոյնք արդէն իրաւունք չունին մեր սեպհական տեղերն աւելլուել . իսկ մեր աւելլուել իրաւանց մասին մեք ոչ միայն նախնական Հրովարտակներ ունինք, այլ և վերջին տարիներուս մէջ յատուկ հրամանագիր եւս ունինք Բ. Դունէն : Վասն զի, 1873 ին, երբ Քեամիլ Փաշան զինու զորութեամբ արգիլեց մեզ մեր սեպհականութիւնն աւելլուել, բողոքեցինք Ի. Բ. Դունն և 1874 ին Դեկ. ամսոյն մէջ, թէ և ինքն հրաժարուած, սակայն հեռագրեց Բեթլէհէմի Միւտիլին հսկել և չթոյլատրել Յունաց իրենց սահմանէն դուրս աւելլածելու : Իսկ 1875 ին, Սեֆեր 23 թիւ յատուկ Հրամանագիր եկաւ Բ. Դունէն, որ մեր բողոքագիրն ուշադրութեան առնելով

և մեր իրաւունքն յարգելով՝ կը հրամայէր ըստ մեր նախնական սովորութեան մեր սեպհական տեղերն աւելլել, ինչպէս որ սոյն հրամանին համեմատ աւելցինք և ս, և ահա ժամանակն մտեցած է դարձեալ պիտի աւելնք առանց որ և իցէ պատասխանատուութեան ենթարկուելու : Վսեմ. Բղէշիէն մեր բողոքին պատասխանելով՝ յայտնեց իրբ թէ Տէրութեան Հրամանագրին մէջ ականէ յանուանէ գրուած չէ՛ թէ սր տեղերն պէտք է աւելլել, այլ միայն գրուած է թէ Հայք իրաւունք ունին իրենց սեպհականութիւնն աւելլուել : Ուստի առաստաղներն և երեք լուսամուտներն պէտք է մնան ընդ քրննութեամբ, որոց վերայ Յոյնք խնդիր յարուցած են :

Սոյն գրոյն դէմ դարձեալ բողոքեցինք՝ յայտնելով թէ առանց ականէ յանուանէ նշանակուելու՝ մեր սեպհականութիւնն արդէն յայտնի է, առաստաղներն և լուսամուտներն մեր սեպհականութեան վերայ են և ոչ ուրիշ տեղ, եւ հետեւապէս Բարեխնամ Տէրութեան Հրամանագրին ամենեւին մեկնութիւն չը վերցնէր :

Մինչդեռ սոյն բանակցութիւններն կը լինէին՝ յանկարծ ամսոյս 22 ին հեռագիր հասաւ Բեթլէհէմի Տեսչէն, թէ Յոյնք մեր բարձրագոյն առաստաղն աւելցին, որչափ ջանացինք դիմագրել խափանելու հնարք չեղաւ, վասն զի Միւտիլին չուղեց օգնել մեզ, պնդելով թէ արգիլելու հրաման չունի Վսեմ. Բղէշիէն :

Սոյն ապօրինութեան դէմ դարձեալ բողոքեցինք Բղէշիէն, որ յայտնեց թէ՛ ինքն աւելլուել հրաման գրած չէ Միւտիլին Յունաց համար, այլ միայն գրած է թէ անցեալ տարի որ աղգըն որ աւելած է, դարձեալ նոյնն պիտի աւելլէ : Առ այս պատասխանեցինք իրեն որ վերին առաստաղն և ոչ մի աղգ

աւլած է անցած տարի Ս. Մննդեան ժամանակ, վասն զի նախորդ տարիէն բողոքած էինք Յունաց բռնաբարութեան դէմ և Բ. Դանէն աւելլու հեռագիր եկաւ մեզ այն օրն, երբ մենք Ս. Մննդեան հանդէսն կը կատարէինք, ուստի և կարող չ'էինք հանդէսն կիսատ թողուլ և աւելլ, և ահա սոյն պատճառաւ յետ մնաց, Վերին առաստաղի աւելլուն դէմ բողոքած ժամանակ հեռագիր եկաւ Բեթլէհէմի Տեսչէն թէ՛ « Յոյք սկսան ահա մեր դրան վերեւ գտնուած «Էլն» եւս աւելլ, բայց արգիլեցինք, սակայն ոչ թէ Միւտիրն, այլ Վսեմ. Բդէշխի կողմէն յատկապէս զրկուած հազարապետն յայտնեց թէ սոյն «Էլն» պիտի աւլուի և եթէ ընդդիմանաք հրաման ունիմ զինուորներ կանգնեցնել և այնպէս աւելլ տալ, ուստի և ես ասացի՝ օտարաց բնաւ չեմ թողարարեր, բայց քանի որ Տէրութեան հազարապետն կը միջամտէ, մեր հաւատարիմ հպատակութիւնն չընդհատուի մեզ բնաւ Տէրութեան հազարապետին և զօրացն զիմադրել. զայս ասելով թողի և ելայ եկեղեցիէն » :

Ինչպէս վերին առաստաղի, նոյնպէս և «Էլի» աւելման մասին վերստին բողոքեցինք Վսեմ. Բդէշխին և ընդ նմին առանձին գրով եւս յայտնեցինք թէ՛ մեր Ս. Մննդեան Տօնն մօտեցած լինելով մեր Հրովարտական զօրութեամբ և Բ. Դանէն եկած Հեռագրին և Հրամանագրին համեմատ պէտք է աւելնք մեր սեպհականութիւնն, և ապիպին պատասխան ստացած չենք այս մասին. Սակայն յայտնի է թէ վերին առաստաղն և «Էլն» պիտի չը թողարարուի մեզ

վերեստին աւելլ ընդդէմ Յունաց բռնաբարութեան. լուսամուտներն եւ ստորին առաստաղն պիտի մնան ընդքննութեամբ, ինչպէս կանխաւ յայտնած է Վսեմ. Բդէշխն գրով, և ահա այսպէս դարձեալ տագնապ, դարձեալ զրկանք իրաւանց, տեսնենք թէ ո՞ւր և ե՞րբ պիտի վերջանան այս խնդիրներն :

Մերկայ Վսեմ. Բդէշխն քաղաքս ժամանելու օրէն ՚ի վեր ամեն տեսակ ցուծեանց մէջ միշտ կը յայտնէ թէ՛ Տէրութեան մեծ և ամենամեծ փափաքն է Ս. Տեղեաց եւ մանաւանդ Բեթլէհէմի Եկեղեցւոյ սեպհականութեան եւ համամասնութեան ( միշտ տերեկութեան ) խնդիրներն կարգադրել օրինաց և իրաւանց համաձայն, և սոյն կարգադրութիւնն ոչ միայն օրտակար է Ս. Տեղեաց իրաւատէր երէք Քրիստոնեայ Ազգաց, այլ յաւէտ Տէրութեան արտաքին քաղաքականութեան : Մեր եւս համոզուած ենք որ այսպէս է, մեք եւս կը փափայքինք, որ ոչ միայն մեր տագնապն վերնայ, այլ և մեր Բարեխնամ Տէրութեան տագնապն ևս՝ ՚ի մասին խնդրոյ Ս. Տեղեաց, յորմէ Տնունդ առաւ երբեմն բազմազէտ Խնդիրն Արեւելեան :

Ըստ յայտարարութեան Վսեմ. Բդէշխին, Ս. Մննդեան Տօներէն ըզկլնի, պիտի սկսի Բեթլէհէմի եկեղեցւոյ համամասնութեան և սեպհականութեան խնդրոյ կարգադրութիւնն : Կը մաղթենք, որ յաղթանակն արդարութեան կողմն լինի՝ ՚ի փառս Տէրութեան և ՚ի պատիւ ներկայ Փօխարքային և իւր ստորակարգեալ պաշտօնէկոյ :

